


1224

THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.




ՏԵԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎ ՈՒՐԴԻՆ ԱՌՁԵԻ:

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 66 ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 11 1899 ԳԻՆ 3 ՍԷՆԹ



ՁԵՑՈՒՆԻ ՍԻՒՆԱԿԸ

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

—)(·)(—

Սր. Վարդանանց տունին առթիւ, Փետր. 26 Կիրակի երեկոյ, ի նպաստ Ձէյթունի մեծ հանգէս մը և վիճակահանութիւն մը անդի պիտի ունենայ Բարեգործական շուկայ մէջ, 45 Էլեօթ փողոց, Պոսթըն: Պատրաստուած են օրուան յատուկ ասնախօսներ, ինչպէս նաև օրորոզ ճառախօսներ և երգիչներ: Մասնաւոր խումբ մը դաշնակի ընկերակցութեամբ Ձէյթունի երգերը պիտի երգէ:

Table with 2 columns: Item name and Amount. Includes 'Սրբէն ծանուցեալ \$1310.88', 'Ձիքակոյէն 4.00', 'Պ. Թաշեան, Ըսփրինկիֆրոյ 1.00', 'Մօլորենէն 40.30', 'Ֆէլտէն 21.25', 'Գծաբարէն 5.00', 'Գումար 1382.43'

—Նիւ Եորքի Յանձնախմբին քով կայ տակաւին 200 սուրբի շափ. կոկիկ գումար մը կ'ակնկալուի Պոսթընի հանգէսին. և ուրիշ գումար մ'ալ Մեծն Ներսէսի ողբերգութեանն, որ պիտի ներկայացուի Մարտ 4ին:

—Մեծն Ներսէսի ողբերգութեան մտից տոմսերն ապուած ու բաժնուած են Օժանդակներուն՝ վաճառուելու համար: Այս տողեր գրուած ասան զեռ լուր մը ստացած շենք Փրօվիտէնի Նուագածուաց Խմբէն, բայց կը յուսանք որ ասոնք յանձն պիտի առնեն հոս լինել՝ որոշեալ երեկոյին: Մտից տոմսի գներն են 1.00 տուր, 75 և 50 սէնթ, օթեակներն կարժեն 5 տողար, իսկ օթեակներու մէջ առանձին նստարան մը կ'արժէ մէկ տողար:

Գանձապատի հասցէն է. MR. H. TAVSHANJIAN, 343 B'WAY, NEW YORK CITY

ՈՐԲԱՆՆԱՄ ՏԻԿՆԱՅՔ

Բաղաբի Տիկնանց Որբախմբի Ընկերութիւնն կը խնդրէ ծանուցանել թէ՛ նոյն ընկերութեան ասորդարձի և ընդունելութեան հանգէսը յետաձգուած է Փետրվար 18 Շարաթ երեկոյին:

ԲԱՐՈՁ—Վաղը, Կիրակի առաւօտ ժամը 10.30ին էլքս շուկայ մէջ, 27րդ փողոց և Պրօտուէյ. նիւթն է. Հոգիին յաղթակցութիւնը:

ՆՆՁԱԿԵՆՆԵՐ ԵՒ ԴԻՄԱԿԱՆՈՐՆԵՐԸ

(Շարունակութիւն 65 թուէն)

Երրորդ նամակը պատգամաւորական ժողովոյ կողմէ զրկուած է Հոկտ. 21 թուականաւ, որով զիւսանը կ'իմացնէ թէ ժողովը Պ. Ճանկիւրեանի ներկայութիւնը կ'ակնկալէ և ոչ գրաւոր բացատրութիւններ. և կը հրաւիրէ զայն նորէն, յաջորդ կիրակին, միևնոյն ժամադրաւայրը ներկայ դանուել:

Կ. Ճանկիւրեան կ'երթայ Աղէքսանդրիա, կը տեսնուի պատգամաւորներուն հետ, և Գահիրէ վերադառնալէն յետոյ ուրիշ նամակ մը կը գրէ Պ. Փափազեանի ուղղեալ, որուն մէջ կըսէ ի մէջ այլոց:

«Բաւական տեսնուեցանք, այդ տեսակցութեան մէջ զարմացանք որ սկզբունքը և օրէնքը յարգելու բնաւ արամազիր չէիք. կ'առաջարկէիք մեզ մասնաւոր շրջանակի մը մէջ և անպաշտօն կերպով բացատրութիւն տալ ձեզի «ըլմակաւորներ» պարունակութեան մասին՝ առանց ինկատի ունենալու որ դուք արդէն նախապէս մէջ հրաւիրած էիք պաշտօնապէս ալ այդ բացատրութիւն:

«... Սկզբէն մինչև վերջ պահանջեցի ձեզմէ կազմել դիւան մը: Ինկատի ունենալով ձեր դիւան մը կազմելու արամազիր չըլինելը, քանի մը օր վերջ, մեր երկրորդ անգամի տեսակցութեան մէջ ստիպեալ ձեզ հաղորդեցինք տեղէն մեկնելու դիտաւորութիւններս. երբ տեսաք որ մենք մ'իշտ օրէնք և սկզբունքը յարգելով կը պահանջենք ձեզմէ կազմել դիւան մը, խոստացաք քանի օրէն վերջ տեղս գալ և կազմել այդ դիւանը, որով ես և ընկերս Պ. Շահինը սրտի գոհունակութեամբ և յոյսով մը բաժնուեցանք ձեզմէ»:

«Ձեր հոս հասած առաջին օրն իսկ առաջարկեցինք ձեռնարկել այդ դիւանի կազմուելուն: Ձարմացանք երբ տեսանք որ դուք նորէն մտադիր էք և կուզէք մասնաւոր շրջանակի մը մէջ և անպաշտօն կերպով առնել մեզմէ բացատրութիւնները, գիտնալով հանգերձ ձեր դատարար ինքնիք»:

Պ. Ճանկիւրեան շարունակելով կըսէ իր նամակին մէջ թէ՛ Պ. Փափազեան յանձն կ'առնէ վերջապէս դիւանն կազմել, որուն ինք և Պ. Այսու լիազօր ներկայացուցիչ պիտի ըլլան եղեր: Եւ երբ պաշտօնագրերու խնդիր մը կը յուզուի, Ամերիկայի պատգամաւորը յանձն կ'առնէ Աղէքսանդրիա երթալ ու պաշտօնական թղթերն առնելով վերադառնալ: Բանն օր կ'անցնի ասոր վրայ, բայց լուր չի գար Աղէքսանդրիայէն: «Հետեւաբար, կ'ըսէ նամակագիրը, նամակս ձեզ հասնելու թուականէն մինչև 5 օր պայմանաժամ կը դնենք, եթէ մինչև այդ պայմանաժամին չի պատասխանէք՝ անկից վերջ ո' և է պատասխանատուութենէ զերձ եմ» և այլն:

(Մնացեալը գալ անգամ)

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Պատերազմը սկսած է նորէն... Այժմեան կռիւը կազմակերպեալ կրօնավարութեան մը դէմ չէ: Ամերիկեան բանակն ու նաւատորմը, որք ջանքախնային հպարտ Սպանիան, կը կուրին այժմ Ֆիլիպին կղզիներու մէջ՝ բնիկներու պղտիկ բանակին դէմ: Ասոնք անկախութիւն կը պահանջեն, ազատ ըլլալ կուզեն, բայց Ընքը Սամ կրակ ու կապար կը դրկէ անոնց:

Հեռագիրը լուր կը բերէ թէ խուռովութիւնը անցեալ Շարաթ երեկոյ կոկիկ, բայց կռիւը Կիրակի օր անդի կուեննայ ամերիկեան բանակին ու տեղացւոց զօրքերուն մէջտեղ: Այսու ինքնաթիռ բնիկներու պարագլխին հետևողները քաջաբար կը կռուին ամերիկեան բանակին դէմ. և իհարկէ ես կը մղուին գերազայն զօրութեան դէմ: Կռիւը կոկիկ Մանիլայի մօտ, բայց ստիպալ ճակատամարտէ մը վերջ, որոյ մէջ մաս կ'առնէ նաև նաւատորմը, բնիկները 10 մղոնի շափ ետ կը նահանջեն, 2000ի շափ մեռեալ, 3500 վիրաւոր և 5000 զերի թողլով. մինչ ամերիկեան բանակը կուեննայ 25 մեռեալ և 250 վիրաւոր մ'իւայն: Վերջի լուրերը կը պատմեն թէ Ջօրաւար Օթիս, ամերիկեան բանակի ընդհ. հրամանատարը, օրուան մարդն է հոն և բնիկներն զէնքերնին վար դնելու վիճակին հասած են արդէն:

—Մինչ այս ստիպալ արևնայնութիւնն անդի կուեննար հազարաւոր մղոն հեռու, հոս՝ Ուաշինկթընի մէջ Մերակայը կ'ըզբաղէր Ապանիօ—Ամերիկեան նոր դաշնագրով: Անցեալ Երկուշաբթի օր կրկար վիճարանութիւններէ վերջ, խնդիրը քուէի դրուեցաւ, և 27ի դէմ 57 քուէով Փարիզի դաշնագրութիւնն ընդունուեցաւ վերջապէս, որով Ֆիլիպին կղզիներն Միացեալ Նահանգաց կը վերադառնին այժմ, և անդուոյն յեղափոխականներն պիտի նըկատուին խաղաղութիւնն վրդովող «Ամերիկեան Գաղաքացիներ»:

Մեզ Հայոցս Համար Հետաքրքրական է գիտնալ թէ Միացեալ Նահանգներն այս դաշնագրութիւնն ընդունելով՝ կամայ կամայ՝ կը մտնեն Եւրոպայի ժխոր քաղաքականութեան մէջ: Ընքը Սամ, որ ամեն բանէ ձեռնպահ՝ քաջուած կը կենար Արեւմտեան կրօնագունտի մէջ, այսուհետև աշխարհի մեծ Տէրութեանց մէջ 7րդ նստարան մը կը գրաւէ: Եւ մեզի համար աննպաստ չէ այս նոր երեւոյթ:

—Պուխարէսթէն առնուած հեռագիր մը կըսէ թէ՛ Մակեդոնիոյ մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին՝ ընդհանուր յեղափոխութիւն մը յարուցանելու համար: Սահմանազրի սոսկական պահակներն Մակեդոնիա անցնող պուլղարները կը ձերբակալեն եղեր՝ բարձրագոյն հրամանաւ:

—Կոմս Բաիլիվի, Պիզմարքին յաջորդն ու Գերման նշանաւոր զին-

ուորականը մեռաւ ամուսյս 5ին՝ 68 տարեկան հասակին մէջ:

—Անգլիոյ Ազատական կուսակցութիւնը շարժուս մէջ իրեն առաջնորդ և պետ ընտրեց Սըր Ուիլիամ Զորքըրթի տեղ Սըր Հէնրի Գամբլ Պանըրման:

—Անգլիոյ Փառլամենթը բացուեցաւ անցեալ Երեքշաբթի օր: Թագուհի բացման ճառը, աշխարհի ընդհանուր խաղաղութեան համար սովորական գոհունակութիւնները յայտնելէ վերջ՝ համարանօք կը խօսի Ջարի խաղաղասիրական առաջարկին վրայ: Կրէսէի խնդիրը՝ Գէորգ ԻԻ-խանի ընդհանուր պարտաւճարութիւնը լուծուած կը նկատէ. իսկ խօսելով Հոռովի մէջ անդի ունեցած հակահայտնական վեհաժողովին վերայ, որոյ որոշումներն դադարի պահուեցան— փոփոխութիւն մը հաւանական կը նկատէ անգլիական այն օրինակ մէջ, որք սահմանուած են անընդհանրականաց համար:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հ. Ֆիլիպով—Չեր զրկուած ողբերգութեան համար: Մ. Մ. Լօրէնս—Մէկ ու կէս ստար զրկեցէք Օր. Պաքուէլի, 3 Փարք Ըսփրիա, Պոսթըն, և խնդրեցէք որ այդ գրքէն զրկէ ձեզ օրինակ մը: Մ. Յ. Լօվէլ—Որբախմբի Տիկնանց անհնապետութեան Գրքի Մասնակաւարեան, թիւ 104 Իսթ, 8 Վրդ փողոց, Նիւ Եորք:

ԲՈՒՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ

Շատերու խնդրանաց վրայ քուէարկութիւնն որոշած ենք մին և և Փետր. 18 երկարել:

Գուէաթուղի շունեցողներն կըրնան դիմել ձեզ կամ մեր գործակալներուն:

Գուէաթուղի կարելի է ստանալ նաև Պ. Աղուենանէ, որուն վաճառատան մէջ դրուած է քուէատուփը: Գուէներն պէտք է զրկել հետեւալ հասցէով:

To the Dickris Committee, 159 E. 27th Street, New York City.

ԱՂԱՏ ԼՍՍԱՆ

Էլքս Հօլ, Պրօտուէյի և 27րդ Փողոցի անկիւնը, Նիւ Եորք:

Այս Կիրակի երեկոյ, ժամը ճիշդ 8ին Պիտի խօսի Տ. Ձիթեան:

Կարևոր վիճարանութիւն մը անդի պիտի ունենայ օրուն երկու կողմերը պաշտպանող յատուկ խօսողներ պատրաստուած են. նիւթն է. «Ամերիկայի Հայերն գործադուլ (ըսթրայք) կուսակցութեան երեքէք»:

Վարչութիւնը կարևոր կարգադրութիւններ ըրած է, զորս պիտի հաղորդէ ժողովին:

Ժողովը պիտի սկսի ժամը ճիշդ ութին՝ առանց սպասելու:

Ուէսթ Հոպոքընի լսարանի ժողովը անդի պիտի ունենայ վաղը՝ սովորական սրահին մէջ, և պիտի խօսի Պատ. Սարկաւագեան:



ՇԱՐԱԲԱՐԱԿԱՆ ԱՉԳՈՒՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ
Կը հրատարակուի մէջն Շարաբ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - Խմբագիր

ԲԱԺԱՆՈՐԳՎՊՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՈՒՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
ՏԻ. ՍԺ. Տարեկան 10 Փրսնք.
Տարեկան 1 50
Վեցամսեայ 75 Բաժանորդագրին կ'ընկնի
Եռամսեայ 40 վճարելի է միշտ:

Պար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԲ, ՓԵՏՐՎԱՐ 11 1899.

ՍՈՒՐԻԱՅԻ ԽԱՉԱԳՈՂՆԵՐԻ

Ասոնք նիւ ինկլընտի կողմերն են հիմայ. քաղաքէ
քաղաք կը շրջին իրը հայ քահանայ, հայ քարոզիչ ու հայ
առաքեալ գործիչ՝ օգնութիւն հաւաքելու համար: Վերջի
լուրը, որ մեզ կը հասնի այս մասին, Մէյնի Փօրթլէնթ քա-
ղաքէն կուգայ, ուր կը թուի թէ խաչագողներու համար
հնձելու հասուցեցած արտ մը կայ այս օրեր: Բարեկամ մը
մեզ կը գրէ թէ անցեալներն մէկը կերելի այդ քաղաքին
մէջ՝ անսով խաչագող մը, որոյ լեզուին վրայ այդ էմ
Արմինիոնը պատրաստ պատասխան մը կը կենայ եղբի՝ ա-
մեն հետաքրքրական հարցմանց: Բարեբաղդար կամ
գեթաղագարար՝ հայ մը կը հանդիպի այս մարդուն՝ և սեռ-
ներով որ «Հայ գործիչը» ո՛չ հայերէն և ո՛չ ալ սոսկի-
բէն կրնար խօսիլ, կը կտակածի, ու անոր ձեռքի վիպակ-
գիրը յափշտակել կը փորձէ. անսով սուրիային Հայու
ձեռքը խառնելով, և ուրիշներու օգնութեամբ, կը յաջողի
վկայագրին ետ առնել ու կը իր զինքն այդ քաղաքէն:
Իսկ որովհետեւ Փօրթլէնթի մէջ այս մարդակերպ գազան-
նքէն՝ պիտո՞ւն տեսնուի մեզ: Երբեք կը շրջանան նորէն
երկու քահանաներու գիմակաւ: Բաղաքին Տէյլի Արկէս
լրագիրը «Հայ քահանաները հոս են դարձեալ» վերնագրով
խմբագրականաւ մը կը պատմէ թէ՛ այս մարդիկ քաղա-
քին ամենայնպէս պատրաստ չեն զինքն զոհելու կ'ըն-
անին, և որոյ արձանագրութեան գրքին մէջ ստոյգ ստու-
բագրութիւնները՝ քառակուսիներու մէջ՝ ծուռ ու մուռ
գրեմը կը ներկայացնեն եղբի՝ սղագիր գրագրի մը յոգ-
նած գրով կ'ընեն զիկ-զակ նշաններուն նման: Պանդո-
կայանը ըսած է եղբի «այս երկու կրթեալ ու լուսաւոր-
եալ ճէնթըմէներուն համար» թէ ասոնք խիտ համակ-
րելի երկու քահանաներ են, որոց համոզիչ խօսքեր կը զի-
թեն երկու քահանայը՝ երբ իրենց խօսակցութեան նիւթն ը-
լայ «Հայկական մեծ խնդիրը»: Այս հայ եկեղեցականներու
այցելութեան նպատակն է, կ'ըսէ նոյն խմբագրականը,
յանուն իրենց ազգային խնդրոյն օգնութիւն հաւաքել, և
մեծ յոյս ունին թէ՛ պիտի յաջողին Ամերիկեան դրամա-
կան առատաձեռն օժանդակութեանց փոխադրողներն ը-
լայ ի Հայրենիս, ուր Յունաց և Հայոց լուսագոյն դաս-
կարգը հերոսաբար կը կռուի եղբի Սուլթանի և Մահմե-
տականութեան դէմ: Աւելի ցաւալին առ է այս խնդրոյն
մէջ թէ յիշեալ Լրագիրը կը հաւատայ թէ՛ քանի որ ստոյգ
պաշտօնն կը տարածուի բոլոր Միացեալ Նահանգաց վրայ՝
պիտի յաջողին ի հարկէ թափուր քահանայէ աւելի բան
մը տանիլ հետերնին:

Այսպիսի լուրեր ստանալէ վերջ, ո՛վ իրաւունք չունե-
նար հարցնել թէ՛ ի՞նչ կ'ընեն մեր Ազգային իշխանու-
թիւնը, և ի՞նչ կ'ընէ մեր Սրբազան Առաջնորդը, «որ որ-
բերու և աղքատներու մեծ խնդիր մ'ունէր իր առջև»: Մեր
և վստահ ենք թէ՛ ամեն ողջամտ հայու հաւատքն ալ այն
է թէ՛՝ Ազգային իշխանութեանց, ի մասնաւորի Տեղական
ընդհանուր Առաջնորդին պաշտօնն ու պարտականութիւնն
է զիմուս ընել ամերիկեան մամուլն ու եկեղեցեաց, և
ժանուցանել ընդհանուր ժողովրդին՝ թէ՛ այս խաչագող-
ները արտօնեալ չեն սեղծ մը՝ դրամ հաւաքել Հայկա-
կան խնդրոյն կամ Հայ ազգին անուսով:

Մեր որբերը անտէր կը թափառին մեծ մասամբ, ա-
նոնցմէ շատը օտարներու քով ապաստանարան կը գտ-
նեն. ինչո՞ք ու աղքատ, հացի փշրանքի կարօտ՝ օգնու-
թիւն կ'ակնկալեն ո՛չ միայն Հայ ազգականութիւններէ,
այլ և ամեն մարդասէր ժողովուրդէ՛՛ որ մը փութաբէն
վճարելու համոզմամբ՝ Մեր կարօտեալը հազուստ չունի,
ձմրան այս օրերուն մէջ կրակ չունի, պատասխարան չունի,
մինչդեռ հոս անսով խաչագողներ անոնց անունը կը
շահագործեն՝ Ամերիկայի բարեօրրա դասակարգներու գը-
րամները շորթելով: Սակայն ցաւ է ըսել, անդին մերին»

ներն ու մեր Առաջնորդը, որոց պարտականութիւնն է Ա-
մերիկացիի կամուր նուէրներն ստանալ ու փոխադրել
զայն Հայրենիս, երկրորդական խնդիրներով կը պարսպին:
Ինչո՞ք մեր Առաջնորդը գիմուս՝ չընէ բարեպաշտ Ամերի-
կացոց մարդասիրական զգացմանց, ու անոնց նուէրներն,
որք ջուրի պէս պիտի վազեն, հաւաքէ ու զրկէ զայնս՝
մահամերձ կեանքեր փրկելու համար: Ամերիկացին կու-
տայ արդէն այդ նուէրը, բայց կուտայ խաչագողներուն,
զի իրական մարդը եկեղեցիին մէջ փակուած՝ Ս. Պատա-
րագ մատուցանելով ու դժոխքի կրակներէն մեզ զգու-
շացնելով կը զրարի:

Եւ երբոր մենք կը բողբենք մեր Գեր. Առաջնորդին
դէմ ու զայն անկարող կը գտնենք այս խիտ կարեւոր
թեմին — ուսկէ սոկի պիտի կրնայ վազել Հայ որբերուն
ու կարօտեալներուն, եթէ լաւ կառավարուի՝ կարող մէ-
կի մը վարչութեան տակ — մեզ կը դատապարտեն շա-
տեր՝ կարծելով թէ անհաստակ ատելութիւն ունինք Սըր-
բագոյնին դէմ: Բայց յարմար տեղն է ըսել թէ՛ Լրագ-
րոյս Խմբագիրը Յովսէփ Եպիսկոպոսի մտնէ մտերմ բա-
րեկամն էր իր առջի պաշտօնավարութեան փամառակ, և է
ցարդ ու պիտի մնայ՝ անձնական ու անհատական յարաբե-
րութեանց մէջ, թէ և Սարաճեան Սրբազանը այս մասին
տարբեր տեսութիւններ ունի այժմ:

ՏԻԳՐԻՍԻ Համոզումն է թէ՛ կարող մէկը, վարչական
մեծ կարողութիւն ունեցող մէկը կարեւոր է այս թեմին.
զի Եպիսկոպոսի պաշտօնն լոկ եկեղեցական չի պիտի ը-
լայ հոս. այլ շատ աւելի բարձր պաշտօն մալ ունի...:

Մեր որբերն ու աղքատներն անօթի կը մեռնին. Ամե-
րիկացին դրամ տալու պատրաստ է. մէկը կուզենք որ
զոնէ հաւանքէ զանոնք:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
ԻՇԽԱՆ ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆԻ

Իշխան Գուիտոն Լուսինեան հետեւալ նամակը ուղղած
է Պէրլինի դաշնադիրը ստորագրող տէրութեանց:
Առ նորին վսեմութիւն Նախագահ Ֆրանսական Հան-
րապետութեան:

Տիար Նախագահ,
Եւրոպական մեծ տէրութեանց բարձր ու վեհանման մի-
ջամտութեան շնորհիւ, Յունաստանի և Թուրքիոյ միջև
վէճը հարթուեցաւ. քաղաքակրթիչ Եւրոպայի հովանաւոր-
ութեան շնորհիւ այս մասին միտքերը անդ որբացան և
կրէտական խնդիրը վերջապէս կ'ստանայ իր պատշաճ լու-
ծումը. միակ լուծումը որ այս պահուն համաձայն է կըզ-
գեցնենք անհուն մեծամասնութեան օրինաւոր փափաք-
ներուն և շահերուն հետ:

Պատիւ ուրեմն մեծ Ազգերուն, որ կատարեալ իրա-
ւամբ իրենց կամքը յարգել աւելին, վերջ առաւ համար
խոսովութեան և վրդովումի շրջանի մը և վերահաստա-
տելու համար կարգն ու կանոնը և ապահովութիւն, որոնք
այնքան հարկաւոր են խաղաղութեան պահպանման, որքան
մեծ և փոքր պետութեանց նիւթական և բարոյական յա-
ռաջգիմութեան և զարգացման:

Բայց եւրոպական դիւանագիտութեան այս բարեբառա
յաջողութեան ծափահարելով հանդերձ, թոյլ տուէք, Տ.
Նախագահ Հանրապետութեան, որ Հայկացեան, յիշատակ-
ներս և յոյսերս դառնան Թուրքիոյ միւս կողմը, դէպի
Հայաստանի այն քաջ ու արի ժողովուրդը, որուն իմ նախ-
նիքը ծառայած են այնքան երկար ժամանակ և այնքան հա-
ւատարմութեամբ, որուն մէջ անցուցած եմ կեանքս մե-
ծաբայն մտքը, որուն կը ծառայեմ կեանքս ամեն վայր-
կեանքին՝ իմ աշխատութեամբ և երկրորդաւ, և որ զիս ի-
րեն կը յանկուցանէ այն անդամներն ի պատճառաւ, որոց-
մով ողորուեցաւ և թէ՛ այն անունին պատճառաւ, զոր կը
կրնմ, և որ արդէն այնքան հարկեցուցիչ պարտականու-
թիւններ կը դնէ իմ վրաս՝ անոր հանդէպ:

Կրէտէն աւելի Հայաստան ստուգած է և կը ստուգուի
Օսմ. տիրապետութենէն, և ամբողջ աշխարհ ստասկայէս
յուզուեցաւ Հայոց կտորածներուն երկար շարքէն:

Դիտաւորութիւն չունիմ, Տ. Նախագահ Հանրապետու-
թեան, վերանորոգել Ձեր մտքին մէջ յիշատակ վերջին
շարքերու այն արտուր պատկերին, ուր Հայրենակիցներէս
աւելի քան 300,000 հոգի, այր, կին և տղայ նեղուեցան,
հայաժուեցան և ջարդուեցան, ուր հայկական բնակարան-
ները այնպիսի ճիւղալուծութեանց հանդիսարան եղան, որոնց
նմանը պատմութիւնը տակաւին չէր տեսած, և որոց մինչ-
և Ձեզի հասած տկար արձագանքները Ձեզմէ սոսկուսի
աղաղակ մը լսեցին անուշաշտ:

Նոյնպէս մտադիր չեմ Ձեր աչքերուն առջև պարզել
այն տեղեկութիւնները և մասնաւոր թղթակցութիւնները,
որոնք ինձ կը հասնին Հայաստանէ, և կ'ապացուցանեն թէ
այդ շարագործութիւնները կը շարունակուին և թէ՛ այն
ցաւագին վէրքերը, որոնցմով ծածկուած է մեր սիրելի
Հայրենեաց մարմինը, սպիանալէ հեռի, ամեն օր աւելի
կը բացուին և թէ՛ երբեմնի հպարտ և ուրիշներուն իրա-
ւունքները յարգող այս ժողովուրդը, որուն Աստուածա-
շունչը կը վերագրէ մարդկութեան ծագումը, ընդհուպ
անանցանելի գերեզմանատուն մը պիտի դառնայ:

(Մնացեալը գալ անգամ)

ՄԱՏՈՒՆԻ ԴԱՏԸ

Մատունի համար կ'ընուի թէ 50
հազար սուրբի շափ ծախք եղաւ
վերջի քանի մը ասորիներուն մէջ:
Եւ հետաքրքրական է գիտնալ թէ
ինչ պարագաներու տակ և ինչու:

Տքթ. Մ. Տատրեան 1884ին Թուր-
քիայէ վերադարձաւ՝ Նիւ Եորքի մէջ
հաստատուելու համար: 1885ին Հայ-
կական մամուլն պատրաստել սկսեց՝
զայն ամերիկացոց ծանօթացնելու
և անով առեւտրական գործ մը ստեղ-
ծելու յոյսով. թէ և ուրիշներ ալ նոյն
փորձը ըրած էին, բայց ըստ բաւա-
կանին օգնող և նիւթական գործ-
թիւն չունենալով՝ չէին կրցած յաջո-
ղիլ. մինչդեռ Տքթ. Տատրեան կըր-
ցած էր այս դժուարութեանց յաղ-
թել, անանկ որ քիչ սանկի մէջ յա-
ջողած էր մամուլը ծանօթացնել շա-
տերուն և զայն վաճառել պղտիկ
շիշերով, իբր դեղ կարգ մը հիւան-
դութեանց և իբր զօրացուցիչ ըմ-
պելի: Բայց անուշը նոյնն էր և նիւթն
ալ այն էր ինչ որ մենք հայերս սո-
վոր էինք հայրենի սան մէջ անուա-
նել մամուլն:

Տքթ. Տատրեանի այս շահաւոր
գործը մեծ ուղադրութիւն գրաւեց,
և բնակաւորութիւնը արեւելեան
և երկար իրեն. Ե. և Թ. (Եագուպեան
և Թէքլիբեան) ընկերութիւնն Ձեռքա-
կոյի մէջ երեան կ'աւ, կ'իւրեան եղ-
բարք ձէրլիլի մէջ է այն գործը սկը-
սեցին, իսկ Պրուքլինի մէջ Տքթ.
Թէոտորեան, որ նոյն գործը 1885է ա-
ռաջ փորձած էր արդէն, սկսեց կրի-
նապատակել իր աշխատութիւնը՝ մըր-
ցելու համար իր նիւ Եորքի պաշտօ-
նակցին հետ. և ճշմարտութիւնը ը-
սելու համար՝ խոստովանելու ենք
թէ այս մամուլն վաճառականներն
ամենն ալ յաջող էին այս նոր գոր-
ծով, որ ընդարձակ ասպարէզ մ'ու-
նէր իր առջև՝ սղջայն Միացեալ Նա-
հանգները: Բայց Տքթ. Տատրեան
1894ին, մասնակցութիւն իր մրցակից-
ներն իրաւունք չունէին մեր յախ-
տեանական մամուլն բառը գործածել,
և թէ ինք լինելով կարապետայն
գործին՝ ուրիշ մը նոյն զառուսով
չէր կրնար պարտալիլ, և հետեւաբար
իրենն էր մամուլով դրամ շահելու
միակ իրաւունքը, դատ բացաւ ու
փորձեց զադրելնել իր բոլոր մրցա-
կիցները: Ասոնց մէջ Տքթ. Թէոտոր-
եան ամենէն տկար լինելով, առա-
ջին զուգը եղաւ այս անտեղի դատե-
րուն. իսկ միւսներն ալ կարգաւ ար-
գիւրեցան մեր հայկական բառը գոր-
ծածելէ. և եթէ արդարութիւնը օգ-
նութեան չի հասնէր, օր մը թերեւ
մեր բառարաններէն ալ մամուլն բա-
ռը պիտի յափշտակուէր յանիրարի:

Դատերը սկսեցին վերջապէս
փաստարաններուն աչքը լոյս: Հայ
ազգականութիւնը թէ՛ հոս և թէ՛
ուրիշ տեղիք, սարկնելով օրօրուե-
ցաւ մամուլի խնդիրներով: Տքթ.
Տատրեան երբեմն դատարաններու
մէջ շահեցաւ, երբեմն կորսնցուց.
Խնդիրը դատարանէ դատարան, քա-
ղաքէ քաղաք ձգձգեց և վերջապէս
անցեալներն՝ անվերջանալի վերջա-
ցաւ ու արդարութիւնը յաղթանա-
կեց. և կ'ընուի թէ խնդրոյն մէջ
մաս ունեցողներուն բոլոր ծախքը
50 հազար սուրբը անցած է այս մա-
սին. այս ահագին կորուստը մէկ հա-
յերէն բառի համար էր միայն. եթէ
մեր բառարանի բոլոր բառերն ալ
այսպէս բարձր արժէք ունենային,
Հայոց գրականներն սոկիով լեցուած
կըլլար թերեւս:

Տքթ. Տատրեանի ինպատ Վճիռ
տուին քանի մը երկրորդական դա-
տարանաց դատաւորներ, որոց դա-
տավճիռն ինքնին ցոյց կուտար թէ
խնդիրն իրենք իսկ լաւ չէին կրցած

ըմբռնել: Իսկ Տօթթէօրին հակառակ վճռեցին, իմէջ այլոց, երկու համարաւոր դատաւորներ. ձրճ Ծօլօլթըր և ձրճ Բօլթ: Առաջինը՝ Միացեալ Նահանգաց Իլլինոյզի դատաւորն դատարանին դատաւորը՝ կարող դատաւճռով մը, որ գլուխ գործոց մը նկատուած է օրէնագէտներէ, իրաւունք չէր տար Տօթթ: Տատրեանի իւրացնել այդ բառ. իսկ ձրճ Բօլթ, Մատաչուսթիսի Մ. Ն. դատարանին դատաւորը, որուն վճռագիրը վերջերս հասաւ, մածունը և մածուն բառը՝ հասարակաց, մանաւանդ Հայոց ստացուածք ըլլալը ընդունելով՝ Բօլթըրին կը վերադարձնէ գայնս:

Տօթթ. Տատրեան դատին այս անյաջող ելքը անսնելով՝ իր մածունին անունը փոխեց այս օրեր և «Ջուլաք» անուննեց գայնս: Այս փոփոխութիւնը եթէ չի նկատարի առաջ ըլլար, այսքան ծախքի ու այսքան դժուարութեանց տեղի չի պիտի մնար անշուշտ:

Բայց «Հայուն վերջի խելքը ...» կ'ըսեն:

Մ Ա Ն Բ Ա Լ Ա Ռ Ի Բ

Մօլաբնէն փետուր 2ին կը գրէ մեր թղթակիցը:

Անցեալ Ուրբաթ երեկոյ Գրադարանի մարտնչութիւնը կարողութիւն հանդէս մը տուաւ, ուր խօսեցաւ Տ. Ուրմէն Տամկանեան ու բացատրեց գրականութեան օգտակարութիւնն և գրադարանի դերը: Բանի պղծակներ արտասանութիւններ ըրին և ուրախացուցին հանդիսականները: Տիրաք Խանիկան և Ինչճեան երկու Հայաստանցի կանանց բարեկամական խօսակցութեան ներկայացումն ըրին մեծ յաջողութեամբ: Պարտաւրջ Մարտիկան և Գրատպեան արեւելեան երանակներ նուագեցին, Տիկին Արապեան դաշնակի վրայ նուագեց և Պ. Սրապեան երգեց շատ կանոնաւոր կերպիւ:

—Մանիմ կը գրէ Թրոյն Յունի. 30 թուականաւ. «Տեղոյս Որբախընամ ընկերութեան վեցամսնայ շքերջանը լրացած ըլլալով՝ անցեալ կիրակի ընդհանուր ժողով մը տեղի ունեցաւ՝ նոր ընտրութիւն կատարելու համար: Անդամներէ զատ՝ ներկայ էին նաև շատ մը այցելուներ: Նոր կանոնագրի այն յօդուածը, որ կ'ըսէր թէ «ամեն ինչ ազատ ձգելու չէ ժողովի կամքին, այլ վարչական անդամք արտօնեալ ըլլալու են իրենց յարմար դատած կերպով գործ տեսնել, (այսինքն օրաց գրամը փոխադրել Պօրտի միջոցաւ և ծախսել անոր ձեռամբ ևն. ևն.) խնդրի առարկայ եղաւ. քանիներ հակառակեցան՝ հրատարակու սպառնալիք, բայց անկարելի եղաւ համոզել այն մի քանի անհատներն, որք ընկերութիւնն իրենց խաղաղք ընել կը ջանան: Վերջապէս շատեր հրատարեցան անդամակցութենէ և շատեր ալ, որք նը-

պատակ ունէին անդամակցել, ձեռնպահ մնացին»:

Ինչո՞ւ սակայն մեծամասնութեան քուէն օրէնքը չի գծեր ընկերութիւն մը մի քանի անձանց ձեռքին մէջ խաղաղիք չընելու համար ո՛չ թէ հրատարակու է անկէ, այլ գործելու և գաղափարակից աւելցնելու է՝ զայն կրնալ կառավարելու համար: Մէկ քանի անհատներ ընկերութեան մը տէրը չեն կրնար ըլլալ, եթէ մնացեալ անդամք տէր չուզեն իրենց վրայ:

—Տեղական թերթերը կը գրեն թէ. անցեալ Ծարաթ երեկոյ Գիտք Սվաճեան անուն «Տաճիկ» քաղաքիս Ուօլարօֆ—Աթորիս առաջնակարգ պանդոկի ճաշարանն կերթայ ճաշելու համար. իւր ընթրիքը 10 տոլար 65 սէնթի կ'ըլլայ. և երբ կարգը դուրս մը վճարելու կուգայ, անկուտի պարտքը իր սէնթ մ'անգամ չունենալը կը յայտնէ: Պանդոկին օտարիկները կը ձերբակալէ Սվաճեան, և անցեալ կիրակի օր Մաճիսթրէթ Մօթի, առջև դատուելով՝ «արտափելի թուրքը» 10 տոլար տուգանքի կը դատապարտուի. և որովհետեւ Սվաճեան դրամ չունէր տուգանքը վճարելու՝ «կղզին» կը շրջուի՝ տուգանքի փոխարէն բանտարկուելու համար:

Այս անձ, որ յայտնի է թէ Հայ միէ, բաւական առեւնէ ի վեր կըսուի թէ մտաւորական ցնցում մը ունեցած է. անցեալներն իր բոլոր ստակը մոխած էր յիշեալ պանդոկին մէջ ապրելով՝ մի քանի օր, և երբեմն անձնասպան ըլլալու խօսքեր ալ կ'ընէ եղեր իր բարեկամաց: Խեղճ երիտասարդը, որ մաքուր հագուած 22-25 տարեկան համարելի անձ մը կ'երևի, վերջերս պարտաւոր ամեն միջոցներէ զուրկ՝ Հայոց ճաշարանները կը թափառէր: Բանի մը Հայեր կը մտածէին այս օրեր հանգանակութեան մը սիրի՝ Սվաճեանը Պօլիս իր ծնողքը զրկելու համար. և այս մտայն գիմում մ'ալ եղած էր Առաջնորդ Սրբազանին: Անցեալ Ծարաթ օր, Ուօլարօֆ երթալէ առաջ, Սվաճեանը Սրբազանին կը զրկուի՝ բարեկամներու թելադրութեամբ ուսկայն Յովսէփ Եպիսկոպոսն 25 սէնթ տալով իր այցելուին, կը զրկէ զայն՝ առարկելով թէ մտաւորական ակարութիւն մը չի տեսնիր անոր վրայ:

—Տ. Մ. Մարգարեան ընտանեկան կարեւոր գործերու համար քաղաքէն Բալիֆօրնիս գնաց. ուստի իւր հրատարակելիք ՍՐԻՆՊԵ, զոր մտադիր էր նախ Ջուլիան անունով, փոխանակ մաս առ մաս հրատարակելու, մի անգամէն իւր այս պիտի օժէ՝ Լրագրոյ տպարանէն:

—Պ. Ա. Սասուն ամուսնացաւ անցեալ Ծարաթ գիշեր այրի Տիկին Աննա Սպարնեանի հետ, ի Ուէսթ Հոպըրն:

—Պ. Լուրյեան իւր մահկանացուն կնքեց Ըսթեպիլի մէջ:

—Տեղական թերթեր կը պատմեն թէ Ատուր Ասատուրեան, որոյ իր կը-

նով հետ ունեցած ամուսնալուծութեան անպատուաբեր դատը իր կարգին կ'սպասէ՝ դատուելու համար քաղաքիս բարձրագոյն ատենանիս տուլ, և անցեալ օր ձերբակալու տուած է կարապետ Տէր Գրիգորեան անուն անձը՝ պահանջելով նաև անկէ 2000 տոլար վնաս՝ իր և իր կնոջ մէջ ծագած խռովութեանց պատճառն եղած լինելու ամբաստանութեամբ: Տէր Գրիգորեան 500 տոլարի երաշխատուութեամբ արձակուած է դատուելու պայմանաւ: Ուօլար այս խնդիրն աւելի ուշագրաւ ընելու համար, Ասատուրեանի, իր կնոջ և Տէր Գրիգորեանի պատկերները կը հրատարակէ իր անցեալ աւուր թերթին մէջ, աւելեւին ձեռքով. և ուրախ ենք որ «Թուրք» կ'անուանէ զիրենք:

Ի ձԵՐՁԻ

Ուէսթ Հոպըրնի մէջ Հաստատուելիք Հայ մանկանց վարժարանի Յանձնախումբը ուրախ ենք ըսել թէ քառասունէ աւելի բաժանորդներ գրուած է ցարդ, և կը յուսայ քիչ առեւնէն գործի սկսիլ: Տեղւոյն եկեղեցի սրահ մը կառուցանելու պաշտօն ունեցող Յանձնախումբը մտադիր է իր գնելիք հողին վրայ, ետեւի կողմը պարտիկ շէնք մը կառուցանել՝ իրր վարժարան գործածուելու համար: Տեղւոյն երկատարութիւնը, ի նըպատ կրթական այս կարեւոր ձեռնարկին նորայր անուն թատրոնը թիւն մը կը պատրաստէ այժմ՝ մի քանի շարաթէն ներկայացնելու դիտաւորութեամբ:

Պ. Թորոսեան, կէս բողոքական և կէս-լուսաւորական երիտասարդը, որ ժամանակէ մ'ի վեր սեղանիս եկեղեցւոյ մը կողմէ կը քարոզէր քանի մը սեղանիս Հայերու, անցեալ օրը ներկայացրէ է զպրոցի Յանձնախումբին ու առաջարկած է, փոխանակ աւելորդ ծախքեր ընելու, Հայ մանկանց կրթութեան գործը իրեն յանձնեն, զի ինքը, յիշեալ եկեղեցւոյ քարոզչին թոյլտուութեամբ, Հայ աղայոց համար ձրի դպրոց պիտի բանայ եղեր, ուր կիրակի օրերն ալ Հայոց քահանան պիտի հրաւիրէ պատարագելու համար, իր կիրակնօրեայ քարոզչն անմիջապէս առաջ: Յանձնախումբը մերժած է այս մարդասիրական առաջարկութիւնը:

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Յունիս 28, Ֆոլիօլըր. Թանգարանի վարչութիւնը մեծ իրարանցումի մէջ է. ժողովները իրարու կը յաջորդեն շուտ շուտ. վերջապէս անդամական ժողովի մը հըրուէրը կը ըլլայ. վարչական մարմինի փոփոխութիւնը անհրաժեշտ կերպիւ անհատակացութիւնները հոս ալ մեծ դեր ունին. անդամները պիշ պիշ կը նային, ոմանք ալ՝ անգործածելի ըզգեստի մը պէս վրասերէն նետելու միջոց կը փնտռեն. Թանգարանը անխնամ թողուած ապակեփեղկի մը պէս եղած է՝ ամեն հովի միջտ խաղալիք:

Մեռելային վիճակ մը կը տիրէ ազգային խնդիրներու մասին. ծախսել առատօրէն՝ երբ օտարի մը հետ է գործը, և գոց պահել քակը՝ երբ Հային կուգայ կարգը. նախադասութիւն մը ուղիղ արտայայտել չի կրցողին իսկ բան մ'ըսել չ'ըլլար. գործաւոր են ամենքն ալ, գործերը քչիկ մը աղէկ, ուստի սէնթի երես տեսնողն ալ լռելու է:

Սընտէյ Ընքուլին երբեմն տաքսիրտ աշակերտները հիմայ սառ նայուածք մ'ունին. Միս ձանձորն, տեղւոյն Հայերէն շատերուն բարեբարութի հրատարուած մեծ հարուած մը տուաւ. թէ ինչո՞ւ հեռացաւ սա՝ իր

սիրելի Հայերէն. —վերքը խորունկ է հոս, Հայի մը անփոփոխական ընթացքին և անխորհուրդ խօսուածքին պէտք է վերադառնալ:

Բաղդադիսոյ և պիրէ մնաւ բարեւոյն սա քաղաքի Հայերուն. կարգը անձնական հակակրանքին է հիմայ. վէրքերն անպակաս: Կիրակի օր մը ճաշարանին մէջ մէկ երկու ժամ անցունելու համար՝ բամպակով խմիկ պէտք է ահանջը, և ընդհանրապէս ամեն կտիւ սա շէնքին մէջ կ'սկսի և հոն կը վերջանայ:

Աղնձեցի Ոսկան Ոսկանեանը որ գրուեցաւ թէ բանա գնաց, իր ճարտարութիւնովը կրցեր է խնդրի ձեւեր առնել մութ ու խոնաւ խցիկին մէջ, և ստիպել որ Թանթոնի էսայլը մը զրկեն զինքը. հոն՝ աղէկ ընդունելութիւն կը գտնէ վերահսկիչներէն, մեծ գործունէութեան մը հետ երբեմն խնդրի խօսուածքներ ընելով: Եթէ ամիսը եթէ օրի շափարագ կը գլին վրայէն ու եկած է հիմայ աւելի առողջ և առաջինէն տարբեր մարդ մ'ըլլալու մտադրութիւնով:

ՍՐԻՆՊ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԼԵՆ Մարգարեան—Հրատարակիչ, Այս երգարանը պիտի պարունակէ անուագն 300 երկերէն՝ հին և նոր նշանաւոր անձանց ու բանաստեղծներու պատկերներէն զատ: Գրքին մէկ երրորդ մասը պատրաստ է արդէն. և մէկ մասին համար ալ պաշար ունինք այժմ. մնացեալին համար քիմում կընենք հասարակութեան՝ աղաչելով որ հաճին մեզ զրկել երգեր ու բանաստեղծութիւններ, որք կարճ են այսպիսի հատորի մը մէջ ունենալ: Մեր բանաստեղծներէ կը խնդրուի գրել այս նոր երգարանի համար բանաստեղծութիւններ բարեկենդանի, հարսանիքի, ուրախութեան, կոչուեցի ու երեկոյթներու յարմարութեան վրայ: Յարմար սեպուածները պիտի ձայնագրուին ու հեղինակները պիտի վարձատրուին մեր կողմէ: Գրել Տիգրիսի խմբագրութեան:

ՀՍԿԻՍԿԱՆ ՄԵՐ

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն Ա. Գըրալըրգեանի թիւ 313 իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք Պատիւ ունի ծանուցանել թէ սա խանութը բացուեցաւ շաբթուս մէջ՝ տեղական և արեւելեան ամէն տեսակ նպարեղէններով: Ապրանք թարմ լինելն ու գներու շափաւորութիւնը ծանուցանելու համար կը հրաւիրեն Հայերն գէթ միանգամ փորձել. մէկ փորձը բաւական է յաճախորդը մըլտնելեան համար:

Մէկ գրին, աժան գրին. քիչ շահ, շատ առևտուր: Սա է մեր նշանաւորն:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՄԱՆԵԱՆ

20½ շքուրն Փողոց, Պօսթըն, Մասն Միակ Հայ նպարավաճառ ի Պօսթըն ի գիտութիւն Պօսթընի և շրջակայի Հայերուն կը յայտարարեն թէ նպարեղէններու նոր խանութ մը բացած ենք, ուր կը գտնուի ամեն տեսակ ընտիր նպարեղէններ. օրինակ. պուլուր, ծեծած, ռոպ, սիսեռ, պամեայ, արեւելեան ձեռք աղցոց սուրճ (խահուէ), Պայսերի պատարմայ, եպիփրախ և այլն և այլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշգրիտ կը կատարուին՝ գոհացուցիչ գներով: Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Կը վաճառեն նաև Բաֆֆի գործերը իրենց սովորական գներով:

Բ ՈՒ Է Ա Թ ՈՒ Ղ Թ

..... 1899

Ստորագրեալս՝ նախանձախնդիր զուակ Հայ. Սուրբ Եկեղեցւոյ, ԿՈՒՁԵՄ 2ԵՄ ՈՒՁԵՐ | որ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան Ամբիկայի Հայոց Ընդհանուր Առաջնորդ մնայ:

Անուն

Մականուն

Տարիք

Ծննդավայր

Հասցէ

